Հաստատում եմ՝

Տնօրեն Ն. Մատինյան

2023-2024 ուստարի

Երևանի Վ. Վարդևանյանի անվան հ.173 հիմնական դպրոց

«Հագուստի դիզայն և մոդելավորում» խմբակի թեմատիկ պլանավորում

Խմբավար՝ Վ. Մանուկյան

Ներածություն

Ծրագիրը նախատեսված է 5-րդ դասարանի և 7-րդ դասարանի համար:
Ուսուցման տևողությունը՝ 1- տարի:
Պարապմունքների անցկացման ձևը՝ խմբային և անհատական:
Պարապմունքների տևողությունը `
- 1 դասաժամի տևողությունը 45 րոպե, շաբաթական՝ 2 դասաժամ:
Ուսումնական գործընթացն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների զուգորդման միջոցով: Հագուստի մոդելավորման խմբակում աշակերտները սովորելու են կատարել համապատասխան չափումներ, գրանցել դրանք, հագուստի նախագծման համար կատարել անհրաժեշտ հաշվարկներ, գծել էսքիզներ, նախագծել, կատարել գծագրերի փոփոխություններ և ստանալ ձևանմուշ: Ինքնուրույն կատարել չափափորձումներ, հագուստի տվյալ տեսակին համապատասխան ընտրել նյութեր, գնահատել դրանց որակը և հատկությունները:
Ուսուցման արդյունքը.
• Մասնագիտական ճիշտ կողմնորոշման ձեռքբերում:
• Առօրյայի նպատակահարմար և արդյունավետ կազմակերպում:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ՖԻԳՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄ»

.Մոդուլի նպատակը -Մոդուլի նպատակն է մարդու ֆիգուրայի համաչափությունների սխեմաների պատկերման համար աշակերտին գործնական հմտություններ տալ:
Մուտքային պահանջները- Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել «Մասնագիտական նկարչության և գեղարվեստական գրաֆիկայի նախնական հմտությունների» մոդուլը:
Ուսումնառության վերջնարդյունք 1- Պատկերել մարդու գլխի սխեմա:
Կատարման չափանիշներ- 1) պահպանվել է դեմքի համաչափությունները, 2) ¾ թեքված դիրքով դեմքի համաչափությունները ճիշտ է պատկերում, 3) պրոֆիլ դիրքով դեմքի համաչափությունները ճիշտ է պատկերում:
Ուսումնառության վերջնարդյունք 2- Պատկերել մարդու ֆիգուրայի համաչափությունների սխեմա:

Կատարման չափանիշներ- 1) մարդու ֆիգուրայի համաչափությունների սխեմայի վրա կոնստրուկտիվ գոտիները որոշակիացված են,
2) ֆիգուրայի սխեմայում պահպանված են համաչափությունները,
3) մարդու ֆիգուրայի ¾ թեքված դիրքը ճիշտ է պատկերված,
4) ֆիգուրայի ծանրության կենտրոնը և միջնագիծը պահպանված է,
5) հեռանկարի կանոնները պահպանված է:
Ուսումնառության վերջնարդյունք 3- Պատկերել 5 տարիքային խմբի երեխաների ֆիգուրայի սխեմաներ:
Կատարման չափանիշներ- 1) մսուրային տարիքի երեխայի ֆիգուրայի համաչափությունները ճիշտ է պատկերում,
2) նախադպրոցական տարիքի երեխայի ֆիգուրայի համաչափությունները ճիշտ է պատկերում,
3) ցածր դպրոցական տարիքի երեխայի ֆիգուրայի համաչափությունները ճիշտ է պատկերում,
4) բարձր դպրոցական տարիքի երեխայի ֆիգուրայի համաչափությունները ճիշտ է պատկերում,
5) դեռահասի ֆիգուրայի համաչափությունները ճիշտ է պատկերում:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱԳՈՒՍՏՈՎ ՄԱՐԴՈՒ ՖԻԳՈՒՐԱՅԻ ԷՍՔԻԶՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի նպատակը- Մոդուլի նպատակն է հագուստով մարդու ֆիգուրայի պատկերման համար աշակերտին գործնական հմտություններ տալ:
Մուտքային պահանջները- Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել «Մարդու ֆիգուրայի համաչափությունների սխեմաների պատկերման» մոդուլը:
Ուսումնառության վերջնարդյունք 1- Դեկորատիվ լուծմամբ պատկերել հագուստով մարդու ֆիգուրա:
Կատարման չափանիշներ- 1) մարդու ֆիգուրան շարժման ժամանակ ճիշտ է պատկերում,
2) գունային համադրությունները ճիշտ է օգտագործում,
3) գուաշի տեխնիկան պահպանել է,
4) ճիշտ է կատարում ֆիգուրայի դեկորատիվ լուծումը:
Ուսումնառության վերջարդյունք 2- Տարբեր գրաֆիկական եղանակներով պատկերել հագուստով բազմաֆիգուր կոմպոզիցիաներ:

Կատարման չափանիշներ- 1) 3 և ավելի ֆիգուրաներից կազմված կոմպոզիցիան ճիշտ է նկարել,
2) գունային համադրությունները ճիշտ է ընտրել,
3) գծի պլաստիկան ճիշտ է արտահայտել,
4) բիծը գծի հետ ճիշտ է համադրել,
5) գեղարվեստական գրաֆիկայում օգտագործվող նյութերը և տեխնիկաները ճիշտ է ընտրել:
Ուսումնառության վերջնարդյունք 3- Տարբեր գրաֆիկական եղանակներով պատկերել 5 տարիքային խմբի երեխաների հագուստով ֆիգուրաներ:
Կատարման չափանիշներ- 1) հագուստով մսուրային տարիքի երեխայի ֆիգուրան ճիշտ է պատկերել,
2) հագուստով նախադպրոցական տարիքի երեխայի ֆիգուրան ճիշտ է պատկերել,
3) հագուստով ցածր դպրոցական տարիքի երեխայի ֆիգուրան ճիշտ է պատկերել,
4) հագուստով բարձր դպրոցական տարիքի երեխայի ֆիգուրան ճիշտ է պատկերել,
5) հագուստով դեռահասի ֆիգուրան ճիշտ է պատկերել:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱԳՈՒՍՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի նպատակը- Մոդուլի նպատակն է աշակերտին անհրաժեշտ գիտելիքներ տալ հագուստի պատրաստման համար օգտագործվող նյութերի տեսականու, դրանց հատկությունների մասին, ինչպես նաև գործնական հմտություններ՝ ըստ հագուստի տեսականու և նշանակության նյութերը ճիշտ ընտրելու բնագավառում:
Ուսումնառության վերջնարդյունք 1- Բնութագրել հագուստի տարբեր խմբերի էական սպառողական առանձնահատկությունները և ներկայացվող սպառողական պահանջները:
Կատարման չափանիշներ- 1) հագուստի սպառողական հատկանիշների խմբերը ճիշտ է ներկայացնում և բնութագրում,
2) վերարկուների նշանակությունը և սպառողական առանձնահատկությունները ճիշտ է բնութագրում,
3) անձրևանոցների և բաճկոնների նշանակությունը և սպառողական

առանձնահատկությունները ճիշտ է բնութագրում,
4) կոստյումային արտադրատեսակների նշանակությունը և սպառողական առանձնահատկությունները ճիշտ է բնութագրում,
5) թեթև հագուստի նշանակությունը և սպառողական առանձնահատկությունները ճիշտ է բնութագրում,
6) հիմնավորում է օգտագործվող հումքի կարևորությունը սպառողական առանձնահատկությունների ձևավորման գործում:
Ուսումնառության վերջնարդյունք 2- Բնութագրել հագուստի պատրաստման համար օգտագործվող նյութերի հատկությունները:
Կատարման չափանիշներ- 1) հագուստի պատրաստման համար օգտագործվող նյութերը ճիշտ է տարբերակում,
2) պարզ եղանակով ճիշտ է որոշում նյութերի բաղադրությունը,
3) պարզ եղանակով ճիշտ է գնահատում նյութերի հատկությունները,
4) նյութերի հատկությունների բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում,
5) ճիշտ է բնութագրում ֆուրնիտուրայի և օժանդակ նյութերի տեսակները և ըստ նշանակության օգտագործելու առանձնահատկությունները:
Ուսումնառության վերջնարդյունք 3- Ըստ հագուստի խմբերի կատարել նյութերի ընտրություն:
Կատարման չափանիշներ- 1) ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում և հիմնավորում վերարկուների նյութերը,
2) ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում և հիմնավորում անձրևանոցների և բաճկոնների նյութերը,
3) ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում և հիմնավորում կոստյումային արտադրանքի նյութերը,
4) ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում և հիմնավորում թեթև հագուստի նյութերը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՁԵՌՔԻ ԿԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
Մոդուլի նպատակը- Մոդուլի նպատակն է աշակերտի մոտ ձևավորել ձեռքի կարեր կատարելու, գործնական հմտություններ:
Ուսումնառության վերջնարդյունք 1- Կատարել ձեռքի կարատեսակներ:
Կատարման չափանիշներ- 1) ձեռքի կարատեսակների բնութագրումը և կիրառման տեղամասերի առանձնացումը ճիշտ է,
2) ձեռքի կարատեսակներ կատարելու համար գործիքների ընտրությունը ճիշտ է,

3) ըստ տեղամասերի ձեռքի կարատեսակը ճիշտ է ընտրել,
4) տվյալ տեղամասում ձեռքի կարատեսակը ճիշտ է կատարել,
5) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱԳՈՒՍՏԻ ՀԻՄՔԻ ԳԾԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի նպատակը- Մոդուլի նպատակն է աշակերտի մոտ ձևավորել հագուստի հիմքի գծագրի կառուցման գործնական հմտություններ:

Ուսումնառության վերջնարդյունք 1- Կառուցել ուսային հագուստի հիմքի գծագիր:

Կատարման չափանիշներ- 1) նախագծման հետագա աշխատանքների համար հիմքի գծագրի կարևորությունը ճիշտ է բացատրում,
2) հիմքի գծագրի կառուցման տվյալների կազմն ամբողջական է,
3) կանացի ուսային հագուստի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
4) տղամարդու ուսային հագուստի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
5) մանկական ուսային հագուստի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
6) աշխատանքի գործիքները ճիշտ է ընտրել և օգտագործել:

Ուսումնառության վերջնարդյունք 2- Կառուցել գոտկային հագուստի հիմքի գծագիր:

Կատարման չափանիշներ- 1) նախագծման հետագա աշխատանքների համար հիմքի գծագրի կարևորությունը ճիշտ է բացատրում,
2) հիմքի գծագրի կառուցման տվյալների կազմն ամբողջական է,
3) կանացի գոտկային հագուստի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
4) տղամարդու գոտկային հագուստի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
5) մանկական գոտկային հագուստի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
6) աշխատանքի գործիքները ճիշտ է ընտրել և օգտագործել:

Ուսումնառության վերջնարդյունք 3- Կառուցել հագուստի թևքի հիմքի գծագիր:

Կատարման չափանիշներ- 1) նախագծման հետագա աշխատանքների համար հիմքի գծագրի կարևորությունը ճիշտ է բացատրում,
2) հիմքի գծագրի կառուցման տվյալների կազմն ամբողջական է,
3) ռեգլան թևքի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
4) ներկարովի թևքի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,

5) շապիկային թևքի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
6) աշխատանքի գործիքների ընտրությունը և կիրառումը ճիշտ է:
Ուսումնառության վերջնարդյունք 4- Կառուցել օձիքի հիմքի գծագիր:
Կատարման չափանիշներ- 1) նախագծման հետագա աշխատանքների համար հիմքի գծագրի կարևորությունը ճիշտ է բացատրում,
2) հիմքի գծագրի կառուցման տվյալների կազմն ամբողջական է,
3) կենտրոնական կոճկումով օձիքի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
4) շալ տիպի օձիքի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
5) պիջակային տիպի օձիքի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
6) կանգնակ օձիքի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
7) գլխանոցի հիմքի գծագիրը ճիշտ է կառուցել,
8) աշխատանքի գործիքների ընտրությունը և կիրառումը ճիշտ է: